եկեղեցոյ իշխանքն չեկին եւ ոչ երէց բնաւ, իբր թէ ոչինչ համարելով զժողովն։

Շաբաթ օր (5 Ց՝-ին՝). երեկոյիս մեր Գրիգորն Շէր-պէթճի եւ Մինասն գնացաք ի Ղումղափուն եւ անդ նստաք ուտել հաց, եւ ելեալ եկաք։ Երեկոյիս Կի-րակոս վարդապետն քարոզ ասաց եւ յէրէկս նոյն-պէս։ Օրս հացածախի վարպետքն պատիւ ունէին։

Կիրակի օր (6 Ց՝-ին՝) ի ժամ գնացաք և Խանումն պաշտօն առնել ետ. և վարդապետն Եղիազար ի Սուրբ Նիկողոս էր։ Եւ երեկոյիս ի ժամ գնացաք, եւ Կիրա-կոս վարդապետն քարոզ ասաց, եւ յետ արձակմանն գնացաք ի քով Նոցա եւ անտի՝ ի տուն։ Եւ օրս Գ Դ մէյխանայ եւս քակեցին ի Ղումղափուն։

Եւ օրս մեծամեծք քաղաքիս մուշավէրէ ունէին մօտ ի թագաւորն, և յետ մուշավէրէիս զայն ասացին՝ թէ զղափուտանութիւնն Սէյտի Ահմէտին տվեալ եւ սպահօք բազմօք ի ցամաքէն և քէհեայէկն յէնկիչէրօք եւս երթալ ի վերայ Ֆռանկին. անպատճառ այգուցս ելանել։ Եւ ուրթերորդ ժամուս դեսպան եկն անդուստ թէ Ֆռանկն զՊօղճա կղզին առեալ բազում և անթիւ գանձիւք, որ է հանդէպ Իզմիրին։ Ցորժամ զայս լսե-ցին՝ այս խափանումն եղեւ, քանզի չեն կարեր եր-թալ ցամաքով ի վերայ Նոցա եւ հնարն ի ծովէ է Նո-ցա հետ պատերազմն. և սոքա չունին մի նաւ բնաւ։

Եւ առաւօտուս (7 Ց՝-ին՝) կրկին մուշավէրէ առ-նելով մեծամեծք և նախարարք և ոչինչ լըւեալ մեր թէ այժմ Ֆռանգն զՄիտիլի կըղզին ծեծելով պատե-րազմի ընդ նա։

Գշի օրս (8 Ց՝-ին՝) օլօֆէն ելաւ ամենեցուն։ Եւ ի մօտ յետնուցս թագաւորն կու ձայնէ զմուֆտին ի պալատն իւր եւ նա կու գնայ ի ներս, եւ ելեալ ի մի մատ սանդխոցն և թագաւորն ի վերէն հայելով գնա, զի ի՝վեր կամի գալ ըստ սովորութեանն, ձայնէ առ